



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12 հոկտեմբերի, 2016 թ.

ք. Երևան

«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրներն ու իրականացվող բարեփոխումները» հակակոռուպցիոն միջոցառման

Իրավաբանների հայկական ասոցիացիան, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, 2016 թ. հոկտեմբերի 12-ին կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում՝ «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրներն ու իրականացվող բարեփոխումները» (ք. Վանաձոր)։ Միջոցառման նպատակը նշված ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրների վերահանումն էր և համապատասխան լուծումների նախաձեռնումը։

Միջոցառումը կազմակերպվել էր ԵՄ ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում։ Միջոցառմանը մասնակցեցին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրատվամիջոցների, Իրավաբանների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչները, այդ թվում վերոնշյալ ծրագրի փորձագետները։

Միջոցառման սկզբում հնչեցին ողջույնի խոսքեր, որոնց հաջորդեցին զեկույցները։ Մասնավորապես, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ Արտակ Սարգսյանը կարևորեց էլեկտրոնային համակարգի ներդրումը։ Իսկ հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Խուրազմանը ընդգծեց նաև էլեկտրոնային համակարգի կողմից հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովումը՝ հավելելով. «...Մեր բոլոր նամակներին մեզ էլեկտրոնային պատասխաններ ենք ուղարկում, ցանկացած քաղաքացի կարող է դիմել մեզ»։

Հանձնաժողովի մեկ այլ անդամ Էդգար Շաթիրյանի խոսքերով՝ այս և այլ խնդիրներ լուծելու համար հանձնաժողովն առաջարկում է գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգից անցում կատարել ակտիվների և շահերի հայտարարագրման համակարգին, ինչպես նաև հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակն ընդլայնել՝ վերանայելով փոխկապակցված անձանց շրջանակը, փոխկապակցված անձանց տվյալները ընդգրկել պաշտոնատար անձի կողմից ներկայացվող մեկ միասնական հայտարարագրում։

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ Մարատ Ատովյանը, կարևորելով քաղաքացիական մասնակցությունը հանձնաժողովի գործունեության մեջ, առաջարկեց հանձնաժողովին կից ստեղծել հասարակական կազմակերպությունների խորհուրդ։

Իրավաբաններ կայքի լրագրող Գևորգ Թոսունյանը, խոսելով լրատվության ոլորտում հայտարարագրերի ռեեստրի դերի մասին, հայտարարագրերի թափանցիկությունն ապահովելու համար առաջարկեց նշել նվիրատվություններ տվող անձանց շրջանակը, շարժական գույքը հայտարարագրելիս կետ ավելացնել մեքենայի տարբերի վերաբերյալ, թանկարժեք գույքի դեպքում նշել գինը, ինչպես նաև հայտարարագրել պաշտոնյաների թանկարժեք հանգիստն ու թոփքները։

Զեկույցներին հաջորդեց արդյունավետ քննարկում, որի ընթացքում բարձրացված հարցերը վերաբերում էին հայտարարագրման համակարգի թափանցիկությանը, շահերի բախմանը, պաշտոնյաների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խնդիրներին և այլն։

Միջոցառման արդյունքում հավաքագրված առաջարկությունները քննարկման համար կուղարկվեն ՀՀ կառավարություն, ՀՀ արդարադատության նախարարություն և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, ինչը կնպաստի ոլորտում արդյունավետ բարեփոխումների իրականացմանը։

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումներին խթանման և իրականացման գործում։ Ծրագրի շրջանակներում հզորացվել են ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները, որի նպատակով ՀՀ մարզերում 105 ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար կազմակերպվել են հակակոռուպցիոն դասընթացներ՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար։ Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվել են փոքր ենթադրամաշնորհներ 20 ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների։ Ծրագրի շրջանակներում 2014 թ. ստեղծվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ այժմ բաղկացած ավելի քան 80 ՔՀԿ-ներից։ Այն առանցքային դեր է խաղում ծրագրի շրջանակներում մշակված ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսության մեջ։ Վերջինիս շրջանակներում նշանակալից է Կառավարության և վերոնշյալ կոալիցիայի համատեղ աշխատանքը՝ ապօրինի հարստացման քրեականացման և անկախ ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման շուրջ։

Ծրագրին իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր)։ Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր)։ Ծրագրի բյուջեն կազմում է 650 000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585 000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31 117 եվրո։

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին։ ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված։ Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա։

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի։ ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը։

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Ծրագրի հանրային կայքերի համակարգող Նարինե Կարապետյանին աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00; հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; URL՝ <http://www.armia.am>: Կատարող՝ Նարինե Կարապետյան, էլ. փոստ՝ info@armia.am:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից։

Հայաստանում
Եվրոպական միության
պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64
94
Հեռապատճեն՝ +37410 54
64 95

Եվրասիանական ժողովրդավարությունը ԵՄ գործադիր մարմնին է։
Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նուր-հատն, ռեսուրսներն ու ուղիները։ 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային գանգալությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը։
Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ։



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից
Հեռախոս՝ +374 10 229610
Հեռապատճեն՝ +374 10 229615

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանի զարգացմանը իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդել քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում։



Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02
99



Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 56 03 60
Հեռապատճեն՝ +37410 56
03 60